ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

9 օգոստոսի 2016 թվականի **թիվ 16** քաղ. Մոսկվա

Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության մասնակցության հետ կապված որոշ հարցերի մասին

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրին միանալու առնչությամբ Ղրղզստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերի եւ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի կիրառման պայմանների եւ անցումային դրույթների մասին» 2015 թվականի մայիսի 8-ին ստորագրված արձանագրության թիվ 1 հավելվածի 41-րդ կետին համապատասխան՝

1. Հաստատել Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու հետ կապված Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների վերանայման շուրջ բանակցություններին մասնակցելու համար կից ներկայացվող բանակցային պատվիրակության կազմը:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունների հետ համատեղ՝

մշակել Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու հետ կապված Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների վերանայման շուրջ բանակցությունների համար նախատեսված հրահանգների նախագիծը եւ ներկայացնել այն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի քննարկմանը.

նշված հրահանգների նախագծում որպես նախնական փոխհատուցման առաջարկների հիմք նախատեսել հաշվարկման բանաձեւի օգտագործումը, որը հիմնված է Ղրղզստանի Հանրապետության տարածք մինչեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների փոփոխությունը եւ դրանից հետո ապրանքների ներմուծման ժամանակ վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016
թվականի օգոստոսի 9-ի թիվ 16
կարգադրությամբ

ԿԱԶՄ

Ղրղստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու հետ կապված Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների վերանայման շուրջ բանակցություններին մասնակցելու համար բանակցային պատվիրակության

Ղրղզստանի Հանրապետությունից՝

Աբակիրով Էլդար Կուրմանբեկի՝	Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ (պատվիրակության ղեկավար)
Ջումալիեւ Մուկտար Կիբիլբեկի՝	Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի խորհրդական
Կոչկոնով Կազիբեկ Մամատկասիմի՝	Ղրղզստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ինտեգրացիոն միությունների դեպարտամենտի խորհրդական
Ռախմանովա Անարխան	Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Ժնեւ

Ռախմանի՝	քաղաքում ԱՀԿ-ի հարցերով ներկայացուցչության ղեկավար
Տորուտաեւ Ալտինբեկ Էլիմի՝	Ղրղզստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության նախագահի առաջին տեղակալ

Հայաստանի Հանրապետությունից՝

Հարությունյան Տիգրան Հայկի՝	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ԵՄ-ի եւ ԱՀԿ-ի հետ համագործակցության դեպարտամենտի ԱՀԿ բաժնի առաջատար մասնագետ
Տեր-Գրիգորյան Նինա Գրիգորի՝	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ԵՄ-ի եւ ԱՀԿ-ի հետ համագործակցության դեպարտամենտի ԱՀԿ բաժնի գլխավոր մասնագետ

Բելառուսի Հանրապետությունից՝

Արժանկովա Իրինա Սվյատոսլավի՝	Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարության արտաքին տնտեսական գործունեության հարցերով դեպարտամենտի ԱՀԿ եւ արտաքին առեւտրի քաղաքականության կառավարման առեւտրային ռեժիմների միասնականացման հարցերով բաժնի պետ
Կոլեսնիկ Վալերի Գեորգիի՝	Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարության արտաքին

	տնտեսական գործունեության հարցերով դեպարտամենտի արտաքին առեւտրի քաղաքականության հարցերով վարչության պետ, դեպարտամենտի տնօրենի տեղակալ
Սոբոլեւ Ռոման Վալերիի՝	Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարության արտաքին տնտեսական գործունեության հարցերով դեպարտամենտի տնօրեն

Ղազախստանի Հանրապետությունից՝

Աբսատով Երլան Սեմբեկի՝	Ղազախստանի Հանրապետության ներդրումների եւ զարգացման նախարարության տնտեսական ինտեգրման դեպարտամենտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Աբուլահսով Գալիմժան Ամանժոլի՝	Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության արտաքին առեւտրային քաղաքականության զարգացման դեպարտամենտի մաքսային-սակագնային կարգավորման վարչության ղեկավար
Օլժաբաեւ Կանատ Ժենսիկբայի՝	Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության արտաքին առեւտրային գործունեության հարցերով դեպարտամենտի տնօրենի տեղակալ

Ռուսաստանի Դաշնությունից՝

Կարպովա Ալեքսանդրա	Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության առեւտրային

Վլադիմիրի՝	բանակցությունների դեպարտամենտի գյուղատնտեսության եւ ձկնորսության բաժնի առաջատար խորհրդատու
Կուսկով Դմիտրի Ալեքսանդրի	Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության եւ առեւտրի նախարարության արտաքին առեւտրային գործունեության պետական կարգավորման դեպարտամենտի տնօրենի տեղակալ
Կուցուկով Անզոր Ասլանբեկի՝	Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարարության միջազգային համագործակցության դեպարտամենտի արտաքին տնտեսական գործունեության եւ ԱՀԿ բաժնի խորհրդատու

Եվրասիական տնտեսական հանձնաժողովից՝

Արիստով Վիտալի Վիկտորի՝	Առեւտրային քաղաքականության դեպարտամենտի ԱՀԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցության բաժնի պետ
Պոմերլյան Եվգենիա Ալեքսանդրի՝	Առեւտրային քաղաքականության դեպարտամենտի ԱՀԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցության բաժնի գլխավոր մասնագետ-փորձագետ
Խայդարովա Նուրգուլ Դուլատի՝	Առեւտրային քաղաքականության դեպարտամենտի տնօրենի տեղակալ